ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/2449-21 առ "16" 09 2021թ.

Ձեր №_____ առ "___" _____ 2021թ.

«ՎՈԼՏ1999» ՍՊԸ-ի տնօրեն
պրն Վ.Ենգոյանին
E-mail: volt1999llc@gmail.com

[№ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/21-01/152 առ 11.06.2021թ. պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի՛ պարոն Ենգոյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար գործիքների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ մայիսի 3-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 8,16,29,37,38,39,40 և 41-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «ՎՈԼՏ1999» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. հունիսի 11-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/21-01/152 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 306000 (երեք հարյուր վեց հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 8-րդ չափաբաժնով սահմանված 25մ^2 հղկաթուղթը, որի ընդհանուր գինը կազմում է 52500 (հիսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, 16-րդ չափաբաժնով սահմանված 25մ^2 հղկաթուղթը, որի ընդհանուր գինը կազմում է 55500 (հիսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, 40-րդ չափաբաժնով սահմանված 30 հատ խարտոցը, որի ընդհանուր գինը կազմում է 32400 (երեսուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ և 41-րդ չափաբաժնով սահմանված 30 հատ խարտոցը, որի ընդհանուր գինը կազմում է 32400 (երեսուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ «ՎՈԼՏ1999» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի

- 2.4.1 կետի <<Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով>>:
- 2.4.2 կետի <<Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում>>,

- 2.4.4 կետի <<Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով>>:
- Հավելված N1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1կետը այն է, գնորդը իրավունք ունի՝

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի;
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը;
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՎՈԼՏ1999» ՍՊԸ-ի հետ 2021թ. հունիսի 11-ին կնքած թիվ 01/152 պայմանագիրը 8,16,40 և 41-րդ չափաբաժինների մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքների մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60